

ՍԱՂՄՈՍ 70

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Հայածողների դեմ օգնության աղոթք	Հակառակորդներից ազատվելու աղոթք	Անձնական թշնամի- ներից ազատվելու աղոթք	Օգնության աղոթք	Վշտի աղաղակ
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշ- տին, Դավթի սաղ- մոսը հիշատակի համար				
70:1-3	70:1-3	70:1-3	70:1-3	70:1-2բ 70:2գ-3
70:4-5	70:4 70:5	70:4-5	70:4 70:5	70:4 70:5

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Նկատե՛ք *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ «փութա՛, շտապի՛ր» (BDB 301, KB 300) ԲԱՅԸ բացում է (տես՝ Սաղմ. 70:1բ) և փակում (տես՝ Սաղմ. 70:5բ) Սաղմոսը (այլսինքն՝ *inclusio*): Այս ԲԱՅԸ կրկնվում է Սաղմ. 22:19, 38:22, 40:13,17, 71:12-ում:

Բ. Նկատեք որպես ՀԱՅՑԱԿԱՆ կիրառված ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ քանակը (նկատեք զուգահեռականությունը):

1. Բացասական
 - ա. թող ամոթահար լինեն, Սաղմ. 70:2ա – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 35:4, 83:17

բ. թող խայտառակվեն, Սաղմ. 70:2ա – BDB 344, KB 340, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 40:14

գ. թող թիկունքով դառնան, Սաղմ. 70:2գ – BDB 690, KB 744, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ

դ. թող շփոթության մատնվեն, Սաղմ. 70:2գ – BDB 483, KB 480, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ

ե. թող ամոթով ետ դառնան, Սաղմ. 70:3ա – BDB 996, KB 1427, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

2. Դրական՝

ա. թող բոլոր նրանք, որ Քեզ են փնտրում՝ Քեզնով ցնձան, Սաղմ. 70:4 – BDB 965, KB 1314, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

բ. թող Քեզ փնտրողները ուրախանան, Սաղմ. 70:4 – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

գ. թող Քո փրկությունը սիրողները միշտ ասեն . . .», Սաղմ. 70:4բ – BDB 55, KB 65, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

դ. թող Աստված մեծարվի, Սաղմ. 70:4գ – BDB 152, KB 178, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

ե. մի՛ ուշանա, Սաղմ. 70:5դ – BDB 28, KB 34, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Գ. Նկատե՛ք Սաղմոսի հրաշալի համագոր զուգահեռականությունը:

Դ. Այս Սաղմոսը որոշակի տարբերությամբ կրկնվում է Սաղմոս 40:13-17-ում, բացառությամբ Սաղմ. 70:3ա-ի:

1. Սաղմոս 70:3, «ետ դառնան» (BDB 690 I)

2. Սաղմոս 40:15, «պապանձվեն» (BDB 1030):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 70:1-3

¹Ինձ փրկելու փութա՛, ո՛վ Աստված,

Ինձ օգնելու շտապի՛ր, ո՛վ ՏԵՐ:

²Թող ամոթահար լինեն ու խայտառակվեն իմ կյանքը փնտրողները.

Թիկունքով դառնան ու շփոթության մատնվեն ինձ չարիք կամեցողները:

³Թող ամոթով ետ դառնան ինձ «Վա՛յ, վա՛յ» ասողները:

70:1 NASB թարգմանությունը ենթադրում է *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ կիրառվում է երկու անգամ (տես՝ Սաղմ. 22:19, 38:22, 40:13, 71:12, 141:1) և ունի համագոր ԼՐԱՑՈՒՑԻՉՆԵՐ (տես՝ Սաղմ. 70:5):

1. ազատիր իրնձ

2. օգնիր ինձ

Նաև նկատե՛ք, որ Աստված (*Elohim*) զուգահեռ է ՏԵՐ (ՅԱՀՎԵ) անվանը, համար 5-ում: Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

70:2 «Թող . . .» Սա անգլերեն կերպն է մատնանշելու ԽՆԴՐԱՆՔԻ ՀԱՅՏԱԿԱՆԸ: Տես Համատեքստային Հասկացություններ, Բ:

❖ «**փնտրել**» Այս ԲԱՅԻ ձևը (BDB 134, KB 152, *Piel* ԴԵՐԲԱՅ) հանդիպում է Սաղմ. 70:2 և 4-ում: Այն նկարագրում է երկու տեսակ մարդկանց՝

1. նրանց, ովքեր փնտրում են սպանելու ուրիշներին, իրենց ճանապարհից վերցնելու

2. նրանց, ովքեր փնտրում են Աստծուն

70:2-3 «**Ովքեր . . .**» Նրանք, ովքեր հակառակվում են սաղմոսերգուին, բնութագրում են երեք զուգահեռ արտահայտություններով:

1. ովքեր փնտրում են իմ կյանքը (բառացի՝ *nephesh*)

2. ովքեր ուրախանում են իմ ցավով

3. ովքեր ասում են «Վայ, վայ»

Այս վերջինը նշում է ՀԿ-յան հայտնի գրական մի տեխնիկա, որը կոչվում է «հակադարձում»: Այն, ինչ նրանք կամենում էին, որ պատահեր սաղմոսերգուին, պատահեց հենց իրենց:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 70:4-5

**⁴Բոլոր նրանք, որ Քեզ են փնտրում,
Քեզանով ցնծան ու ուրախանան:
Քո փրկությունը սիրողները միշտ թող ասեն .
«Թող մե՛ծ լինի Աստված»:
⁵Բայց ես աղքատ եմ ու կարիքավոր .
Շուտով հասի՛ր ինձ, ո՛վ Աստված,
Դու ես իմ օգնականն ու փրկիչը,
Ո՛վ ՏԵՐ, մի՛ ուշանա:**

70:4 «Քեզ են փնտրում» Սա ՀԿ-յան դարձվածք է Աստծո հետ անձնական հավատքի փոխհարաբերության համար, որին բնորոշ է՝

1. տաճարի երկրպագությունը
2. ուխտի հնազանդությունը

Սաղմ. 70:4-ի վերջին տողը հնարավոր է տաճարի պատարագ է:

70:5 Նկատե՛ք, որ Սաղմ. 70:1-ի «ազատիր» և «օգնիր» երկու հասկացություններն էլ կրկնվում են («ազատիր» բառի տարբեր, սակայն համագոր ԲԱՅ):

❖ **«Ես աղքատ եմ ու կարիքավոր»** Սաղմոսերգուն բնութագրում է իր իսկ ընկալած վիճակը: Աստված մեծ է (Սաղմ. 70:4), սակայն նա ցավ է քաշում: Նա աղաչում է Աստծուն, որ շուտով գա իրեն օգնության:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Սաղմոս 70-ը նաև գտնվում Սաղմոս 40:13-17-ում:
2. Ձեր սեփական բառերով բացատրեք «հակադարձում» գրական հասկացությունը:
3. Ի՞նչ են նշանակում Աստծո *Էլոհիմ* և ՅԱՀՎԵ անունները: